



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4072

6



74 JUL 2009

ԱՍԿԵՐԻ

ՄԱՆՈՒԿԱԿԱՆ

2538

ՉՐԱԴԱՐԱՆ

IV

Կ. Ն. ՆՆՆՆԿ

ՍՏՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹ. ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Թարգմ. Մ. Ա. Կ. և ՍՏ. Լ.

ԹԻՖԼԻՍ

159  
Ե-30

159

Կ-30 ԿԿ

«ՀԵՍՈՒՆԵՐ»-Ի ՄԵՆՍԵՎ ԵՐԹԵՎԵՆ ԳՐԱԳՐԱՆ



6X

2534


IV

Կ. ԱՆՏՈՒՔ

### ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՆՄԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Թարգմ. Մ. ԱԳ. և ՍՏ. Լ.



ԹԻՖԼԻՍ

Տպարան «Հևրմէա» Մաղաթեան փողոց № 5.  
1906 (214)



6266  
41

I.

1<sup>o</sup> նշ է սովորութիւնը: Սովորութիւն գարձրած գործողութիւնների տարրերութիւնը բնագոյային գործողութիւններից:

Մանուկների կրթութեան միջոցին պմենքը հարկաւոր նշանակութիւն չեն տալիս նրանց մէջ սովորութիւններ մշակելուն: Շատ ծնողներ և դաստիարակների աւելի շատ աշխատում են զաւակների խելքը գիտութիւններով հարստացնել և մանուկների զգացմունքները զարգացնել, քան թէ նրանց մէջ հարկաւոր սովորութիւնները մշակել: Այդ նրանից է առաջանում, որ նրանք գերադասում են աւելի թեթև գործունէութիւնը, և կամենում են խոյս տալ համեմատաբար զբաւար գործից: Մաների մէջ լաւ սովորութիւններ և հակումներ մշակելու համար ծնողներից և դաստիարակներից պահանջւում է թէ հետևողականութիւն, թէ աշարջութիւն և թէ համբերութիւն: Իսկ գիտութիւններ հաղորդելու համար երբեմն բաւական է մի քանի զրոյց, ընթերցում, խրատական խօսակցութիւններ և զրօսանքներ:

Մինչդեռ սովորութիւնը մեր «երկրորդ բնութիւնն է», ասում է Ժողովրդական իմաստութիւնը: Բայց այդ

ընտելութիւնը բնածին չէ մեր մէջ, այլ մենք ենք ձեռք բերած՝ շնորհիւ տպաւորութիւնների և գործողութիւնների կրկնութեան: Մենք ենք սովորութիւն դարձնում ծխելը, սառը ջրի մէջ լողանալը, վաղ վերկենալը, գաշնամուրի վրա նւագելը և այլն: Այն տպաւորութիւնները և գործողութիւնները, որոնք սկզբում պահանջում էին մեր գիտակցութեան մի որոշ կենտրոնացում, վերջի վերջոյ սովորութիւն դառնալով՝ կատարում են կիսազիտակցարար կամ մինչև իսկ բոլորովին անգիտակցարար: Նրանք դառնում են կրկնած մեքենայական գործողութիւններ: Այսպիսով սովորական կոչւած գործողութիւնները մենք իւրացնում ենք. նրանք անձնական վարժութիւնների հետեանքն են, որով և զանազանում են բնածնից: Կենդանիները և մարդը պատրաստի սովորութիւններով չեն ծընւում, նրանք ստեղծում են օրգանիզմի կեանքի ընթացքում:

Սովորութիւնը որոշ գործողութիւնների կամ շարժումների առաջ գալիս է որոշ տպաւորութիւններից անմիջապէս յետոյ: Եթէ ստացւել են որոշ տպաւորութիւնները, նրանցից յետոյ արագ կերպով և անփոփոխ կարգով կառաջանան և այսինչ գործողութիւններն և շարժումները: Բնածինը և սովորութիւն դարձածը՝ իրանց ծագումով տարբեր լինելով միմիանցից, այնուամենայնիւ իրար հետ սերտ կապ ունեն: Մօրգանի արդարացի նկատութեամբ, անագին մեծամասնութիւն կազմող զէպրերում այն, ինչ որ ձեռք է բերւում, ձևափո-

խութիւն է այն բանի՝ ինչ որ ժառանգարար է ստացւած:

Եթէ մենք սկսենք դիտել նորածին շան և կատուին, որոնք կամաց-կամաց և քիչ թէ շատ դժւարութեամբ ընտելանում են շրջապատող հանգամանքներին, կտեսնենք որ սկզբում նրանք գործում են կարծես պատահական և անորոշ կերպով. նրանք աշխատում են իրանց նպատակին հասնել մի բանի գանազան միջոցներով, որոնցից շատերը աւելի աննպատարմար են իրանց հետեանքներով, բան թէ միւսները. այդ եղանակները կրկնում են և այդպիսով սկզբում բազմաթիւ և համեմատաբար անորոշ վարժութիւնները աստիճանաբար սահմանափակւում են և աւելորդ գործողութիւնները դէն են զցւում, և կատարւում են միայն այն շարժումները, այն գործողութիւնները, որոնք գործնականապէս աջող են հանդիսացել: Այդ ջանքերը, շնորհիւ կրկնութեան, դառնում են սովորական, և այստեղից զարգանում է գործելու այն որոշ եղանակը, որի մասին մենք ասում ենք, թէ կենդանին ձեռք է բերել լաւ յարմարեցրած սովորութիւն:

Այն գործունէութիւնը, որ հետեանք է սկզբնական անկապ շարժումների ընտրութեան, մի նոր արդիւնք է, և այդ արդիւնքը առաջ է եկել իւրացման, սեփականացման շնորհիւ, թէպէտև կատարւում է բնածնի սահմաններում: Բնածինը՝ զա հիմնական գանձն է, հողը, իսկ բոլոր իւրացրած բաները, ուրեմն և սովորութիւնները, միայն այդ հողի բոյսն են և կապւած են այդ հողի յատկութիւնների հետ:

II

Սովորութիւնների նշանակութիւնը մեր մարմնաւոր կեանքում:

Սովորութիւնները մեծ նշանակութիւն ունեն մեր մարմնաւոր կեանքի մէջ: Նրանց միջոցով մենք յարմարուում ենք մեր օրգանական գոյութեան պայմաններին: Յայտնի է, օրինակ, որ շնորհիւ սովորութեան, առանց մի որևէ վնաս հասցնելու իր առողջութեան, մարդ դիմանում է բարեխառնութեան այնպիսի մի աստիճանին, որը անտանելի կըլինէր նորա համար առանց այդ սովորութեան: Ահա Հիւսիսային Ռուսաստանի մի գետի բերանի մօտ, ափին մի քանի սամօէզներ սպասում են ձօտեցող շոգեկանին: Նրանք բոբիկ են: Շորը լաւ չէ պաշտպանում նրանց: Աշնանային սառը քամին ստիպել է ճանապարհորդներին և նաւաստիներին տաք շորեր հագնել, իսկ սամօէզները իբր թէ ցուրտը չեն էլ զգում, նրանցից սա կամ նա միայն բարձրացնում է մէկ այս, մէկ այն ոտը: Պարզ է, որ սովորութիւնը նրանց հնարաւորութիւն է տալիս անվնաս դիմանալու այնպիսի սառնամանիքին, որպիսին որ խիստ տանջանքներ կըպատճառէր ցրտին անսովոր մարդուն:—Փոխադրւենք այժմ Ռուսաստանի հարաւային կողմը՝ Անդրկովկաս: Ամառն է, կէսօր: Արեգակն անտանելի կերպով այրում է: Բարեխառնութիւնը մօտ 45° է: Ռուսաստանի միջին գօտիներից եկած մարդու համար այսպիսի տաքը անտանելի է, մինչ դեռ տե-

ղացի բնակիչները, սովորութեան շնորհիւ, դիմանում են առանց մի առանձին նեղութիւն կրելու <sup>1)</sup>:

Կարելի է ընտելանալ այնպիսի կերակրի, որ առջ զգւելի էր թւում: Այն եւրոպացիք, որոնք տեղափոխուում են Չինաստան, որտեղ, տեղական պայմանների պատճառով, կերակուր պատրաստելու արւեստը երոպականից շատ և շատ տարբերում է, սկզբում այս ինչ, այն ինչ բանը չեն ուտում կամ ուտում են անախորժ զգացումով, որովհետև ստիպւած են լինում ուտել անսովոր կերակուրներ, բայց յետոյ նրանք այդ կերակրին սովորում են, և նա նրանց համար էլ այնպէս ախորժելի է դառնում, ինչպէս և բուն շինացիների համար:—Մի հիւանդ աղջկան բժիշկը պատկերել էր ձկան իւղ խմել: Սկզբում իւղը նրա մէջ զգւանք էր առաջացնում, մինչև իսկ սրտախառնութիւն, բայց յետոյ նա սովորեց, և ձկան իւղ խմելը նրա համար սովորական պահանջ դարձաւ, և նա խնդրում էր իւղը մինչև իսկ այն ժամանակ, երբ առողջութեանը նայելով ոչ մի կարիք չունէր ձկան իւղ խմելու <sup>2)</sup>:

<sup>1)</sup> Վերը բերած երկու օրինակները ոչ թէ դուս այնպիսի սովորութիւններ են, որ ձեռք են բերել որոշ անձնաւորութիւնները իրանց անձնական կեանքի ընթացքում, այլև հետևանք են օրգանիզմի միջավայրին. յարմարելուն, որ տեղի է ունենում երկար և դանդաղ ճանապարհով և որի վրա ազդում է առանձնապատկութիւնների և ժառանգականութեան բնական ընտրութիւնը:

<sup>2)</sup> Յաճախ կրկնող տղաւորութիւնները, ասում է Ուշինսկին, երևի մեր օրգանիզմի մէջ ինչ որ փոփոխութիւններ են

Մարդ կարող է իրան ընտելացնել կերակուրը այս կամ այն ժամանակ ընդունելու և այդ ժամանակը հասնելուն պէս ուտելու պահանջ զգալ, աղմուկի և թխկթխկոցի մէջ պիտի քնել, որոշ ժամին զարթնել և այլն:

Մենք սովորում ենք այս կամ այն ֆիզիքական աշխատանքը կատարել, և սովորելով՝ կատարում ենք ճարպիկ և հեշտ կերպով: Եթէ առանց համապատասխան վարժութիւն ունենալու, մենք սկսենք մեխ ցցել, նա մեր ձեռքում ծուում է. եթէ սկսենք մի որևէ տախտակ տաշել, մեր մատները կտրում ենք: Իսկ վարժելով՝ այդ գործողութիւնները կատարում ենք թեթև և ճարպիկ կերպով: Բացի այդ, շնորհիւ անընդ-

առաջացնում, որոնք ընտելացնում են մեր օրգանիզմը՝ զիմանալու այն բանին, ինչին նա չէր կարող զիմանալ և ինչուր կարող էր նրա վրա մինչև անգամ կործանիչ կերպով ներգործել: Այսպէս օրինակ, քիչ-քիչ մարդիկ սովորում են բարեխառնութեան արագ փոփոխութիւններին, որոնք ասած կարող էին նրանց մէջ հիւանդութիւն առաջացնել. այսպէս օրինակ, եղի ևն զէպրեր, երբ մարդիկ սովորել են թոյն խմել այնպիսի չափերով, որ կարող էր սպանել անսովոր մարդուն» (Մանկ. մաս. I. էրես 136):

«Երբ որ մարդու արտաքին նիստ ու կացը փոխում է, ա-Պ. Թ. Կապտերևը, երբ փոխում է նրա կերակուրը, հագուստը, հեանքի եզանակը, պաշտպանելու և յարձակելու զէնքերը, այն ժամանակ անխուսափելի կերպով մեծ կամ փոքր չափով փոփոխութեան է ենթարկւում և ամբողջ օրգանիզմը: Օրգանիզմը չի կարելի ըմբռնել ինչպէս մի՛ ըլլորովին առանձնացած բան այն միջավայրից, որտեղ նա զարգանում է և ապրում. միջավայրի և օրգանիզմի միջև գոյութիւն ունի սերտ կապակցութիւն և կենդանի փոխադարձ ազդեցութիւն:

հատ վարժութիւնների, ֆիզիքական աշխատանքը դառնում է մեզ համար աւելի քիչ յոգնեցուցիչ, քան թէ էր նրան ընտելանալուց առաջ: Սովորութիւնից կախւած է նաև արտաքին զգայարանների գործունէութեան արագութիւնը և ճշտութիւնը: Կտորներ ջեկողները վարժութեան շնորհիւ արագ նկատում են կտորների գոյնի ամենանուրբ տարբերութիւնները: Որսորդները ականջը վարժեցրած լինելով՝ զարմանալի արագ կերպով են որոշում այս կամ այն թռչնի հանած ձայնը. փոստատան ծառայողը սովորում է ձեռքով հեշտ որոշել նամակների ծանրութիւնը, իսկ զեղպտան ծառայողը նուրբ կերպով զանազանում է իրերի հոտը: Սովորութիւնից է կախւած ման գալու, նստելու, այս կամ այն հանգամանքներում իրան պահելու եղանակը: Մարդու զեղեցիկ կամ ազեղ ձեերը սովորութեան պըտուղ են:

Ձեռք բերած սովորութիւնները, իրանց անասելին նայած, բարեբար կամ վնասակար ազդեցութիւն են գործում մարդուս առողջութեան վրա: Այսպէս օրինակ, կենքի կանոնաւոր կենցաղին սովորած լինելը, ուտել խմելու մէջ չափաւորութեան սովորած լինելը, աշխատանքի և հանգստութեան կանոնաւոր յաջորդութեան սովորած լինելը—այս ամենը առողջութեան վրա բարեբար ազդեցութիւն է գործում. հակառակ սովորութիւնները հակառակ էլ ներգործութիւն են ունենում:

]]

III

Սովորութիւնների նշանակութիւնը մեր հոգեկան կեանքում:

Ոչ պակաս լուրջ գեր են խաղում սովորութիւնները և մեր հոգեկան կեանքի և գործունէութեան մէջ: Յոյց տանք նրանց նշանակութիւնը մեր մտաւոր գործունէութեան մէջ, մեր զգացմունքների և կամքի գործունէութեան մէջ:

Մտաւոր գործունէութեան աշողութիւնը շատ և շատ կախւած է յարատե մտաւոր աշխատանքի ընդունակութիւնից: Այդ ընդունակութիւնն էլ կախւած է սովորութիւնից: Այն մարդը, որ սովոր չէ մտաւոր աշխատանքին, անկարող է մտաւորապէս այնքան աշխատել, ինչքան որ կարող է նա, ով որ սովոր է այդ բանին: Ով առիթ է ունեցել մեծերին գիր սովորեցնելու, նա գիտէ որ վերջինները նոյնպէս շուտով են յոգնում, ինչպէս և ութ տարեկան աշակերտները: Միայն շնորհիւ սովորութեան մարդս ընդունակ է դառնում աւելի երկար մտաւոր լարւած աշխատանքի, նաև ուշադրութեան և մտածութեան:

Մարդու մտաւոր զարգացման իսկական յատկանիշը կայանում է մտաւոր գործողութիւնների արագ և ճիշտ կատարելու հմտութեան մէջ: Այդ մտաւոր գործողութիւններն են՝ գատողութիւններ անելը, մասնաւոր գատողութիւններից ընդհանուր եզրակացութիւններ հանելը, համաձայնեցնելը ընդհանուր գատողու-

թիւնները մասնաւոր փաստերի հետ և այլն: Իսկ այդ հմտութիւնը ձեռք է բերում վարժութիւնների միջոցով, որոնք ամբաստանում են համապատասխան մտաւոր սովորութիւնները: Մտաւոր գործունէութեան միջոցին դատողութեան այս կամ այն ձևի գերակշռութիւնը, բացի այլ պատճառներից, մասամբ կախւած է և այդ ձևով դատելու սովորութիւնից: Այսպէս օրինակ, կան մարդիկ, որոնք մտածելու ժամանակ, սովորած են լինում սկսել մասնաւոր դէպքերից և անցնել ընդհանուր եզրակացութիւններին, իսկ միւսները, ընդհակառակը, գերազասում են սկսել ընդհանուր հիմունքներից և անցնել մասնաւոր դէպքերին: Զարգացած մտածողութեան տէր մարդիկ, նախ քան իրանց մտքերը յայտնելը՝ բերանացի թէ գրաւոր, նախ դասաւորում են զբանց: Իսկ սեփական մտքերը դասաւորելու ընդունակութիւնը նշանաւոր չափով կախւած է այդ գործունէութեանը ընտելացած լինելուց: Չեք բերւած մտաւոր հմտութիւնները շատ և շատ հեշտացնում են յետագայ մտաւոր գործունէութիւնը: Այսպէս օրինակ, աշակերտը, որ հմտութիւն է ձեռք բերել առաջին հարիւրեակի սահմաններում արագ կերպով հաշիւ անելու օգտւում է այդ հմտութիւնից աւելի բարդ թւաբանական խնդիրներ լուծելու ժամանակ:

Նոր խնդիրը լուծելու միջոցին նրա վճռի ընթացքին է հետևում և ստիպւած չի լինում իր ուշադրութիւնը ընդհատել հաշիւելու համար, թէ օրինակ՝ Ի՞նչքան կտտացել 7-ը Թ-ով բազմապատկելուց կամ 8-ը 10-ի հետ գումարելուց. վարժութեան շնորհիւ ձեռքը

գրում է հարկաւոր բաւերը, առանց ուշադրութեան նկատելի մասնակցութեան: Սովորած լինելով ուղղագրութեամբ կանոնաւոր գրելու, աշակերտը կանոնաւոր է գրում, յիշելով շարունակ համապատասխան քերականական կանոնները: Իսկ այդպիսի մի վարժութիւն չունենալով, նա ուղղագրական սխալներ է անում, թէկուզ լաւ գիտենալիս լինի քերականութիւնը: Անհնարին է գրելիս միեւնոյն ժամանակ հետեւել թէ մըտքերի ընթացքին և թէ ի նկատի առնել՝ հարկաւոր է արդեօք այս կամ այն բառի մէջ գրել է կամ է տառը: Պարզ է, որ մի մարդ, որ չի մշակել իր մէջ յիշեալ հմտութիւնները, վերին աստիճանի զժարութիւնների պիտի հանդիպի իր մտաւոր գործունէութեան մէջ: Նա ոչ կը կարողանայ արագ կերպով վճռել թւարանական խնդիրները, ոչ օգտուել ընթերցանութիւնից իր գիտութիւններով հարստացնելու նպատակով, ոչ էլ կը կարողանայ գրաւոր կերպով յայտնել իր մտքերը: Ձեռք բերած հմտութիւնները հանգիստնում են իբրև մի ոյժ, որն օգնում է մեզ աջող կերպով մտաւորապէս աշխատել և կատարելագործել այդ աշխատանքը:

Մի որևէ գեղարւեստ, օրինակ՝ նկարչութիւն, երաժշտութիւն սովորելու միջոցին համապատասխան հմտութիւնների մշակութիւնը նոյնպէս անապին նշանակութիւն ունի:

Սովորութիւնները ներգործում են նաև մարդու զգացմունքների վրա: Այն ամենը, ինչ որ համաձայն չէ մեր սովորութիւններին, առաջացնում է մեր մէջ մեծ մասամբ անախորժ զգացմունք:

Զրկեցէք երեսային այն քաղցրեղէնից, որ սովոր է երեխան ստանալ, և նա զրկանքի անհաճոյ զգացմունք կը զգայ, կը վշտանայ: Ով ծխելուն կամ խմելուն սովոր է, նրա համար տանջանք է այդ սովորութեան բաւարարութիւն չըտալը:

Ստիպեցէք մէկին, որ սովորել է մտաւոր աշխատանքի, կատարել միայն ֆիզիկական աշխատանք, և նա դժգոհութիւն կը զգայ: Միւս կողմից, ստիպեցէք այն մարդուն, որ սովոր է միայն ֆիզիքական աշխատանքի, անել այնպիսի պարտաւորութիւններ, որ աւելի մտաւոր աշխատանք է պահանջում, նա էլ նոյնպէս բաւարարութիւն ստացած չի լինի:

Մարզը ընտելանում է այն մարդկանց, որոնց հետ երկար ապրել է, և նրանցից անջատուժը նրա համար ծանր է: Նա սովորում է այն տեղին, որտեղ երկար ապրել է, և բնակութեան տեղի փոխելը յաճախ նրա մէջ առաջացնում է վիշտ և փստոսանք: Երբեմն կարելի է տեսնել, որ մարդիկ վիշտ և փստոսանք են զգում՝ տեղափոխելով խղճուկ ընկալանից, որտեղ երկար ապրել և աշխատել են, քարէ ապարանքները: Հայրենասիրական զգացմունքի հիմքը իսկապէս հայրենիքին և հայրենակիցներին սովորած լինելն է: Սովորած լինելով մանկութիւնից այն տեղին, որտեղ միշտ ապրել ենք, այն մարդկանց, որոնց մէջ ապրել ենք, սովորած լինելով մայրենի լեզուն և հարազատ սովորութիւններին, մենք զգում ենք մի ներքին կապ այդ ամենի հետ և՛ տեղափոխելով մի ուրիշ երկիր, ուր թէ տեղը, թէ մարդիկ, թէ լեզուն, և թէ

բարքերը տարբեր են մերինից, մենք կարօտում ենք հայրենիքին:

Այն զգացմունքները, որ կրկնուում են մարդու մէջ, սովորական են գառնուում և շատ հեշտութեամբ են նորից ծագում նրա մէջ: Եթէ անհատի մէջ կեանքի հանգամանքների շնորհիւ բարկութեան զգացմունքը յաճախ է գրգռուում, նա աւելի հակուում է ստանում այդ զգացմունքը արտայայտելու, իսկ եթէ նրա մէջ ընդհակառակը՝ առաւելապէս սիրոյ, բարեացակամութեան զգացմունքներն են արծարծել, նա էլ աւելի տրամադիր է լինում այդ բարի զգացմունքները արտայայտելու: Ահա ինչիցն է որ՝ երբ ցանկանում են սանի մէջ կրօնական զգացմունքները կրթել, աշխատում են այդ զգացմունքը նրա մէջ յաճախ զարթեցնել. ցանկանալով նրա մէջ բարոյական զգացմունքները կրթել, աշխատում են նրա մէջ յաճախ զարթեցնել սէր՝ դէպի բարին, արդարք և դէպի ամենն, ինչ որ բարոյական է:

Միատեսակ զգացողութիւնների կրկնութիւնը ոչ միայն մշակում է մարդու մէջ հակում դէպի այդ տեսակ զգացումները, այլ և մշակում է նրա մէջ համապատասխան հոգեկան տրամադրութիւն: Եթէ մարդու մէջ մանկութեան տարիներում շարունակ առաւելապէս ախուր և մոայլ հոգեկան տրամադրութիւնն է ծագելիս եղել, այդպիսի տրամադրութիւնը գերիշխող է հանդիսանում և նրա կեանքի յաջորդ տարիներում. իսկ եթէ ընդհակառակը՝ նրա մէջ շարունակ ուրախ և անզոր տրամադրութիւնն է առաջանալիս եղել, այն ժամանակ այդպիսի տրամադրութիւնը իշխող կըլինի և

նրա կեանքի յետագայ տարիներում:

Ամենամեծ ազդեցութիւնն են գործում սովորութիւնները մեր ցանկութիւնների, մեր գործունէութեան և մեր վարքի վրա:

Այս կամ այն պահանջին բաւարարութիւն տալու համար այնպիսի միջոցներ ենք փնտռում, որոնցով սովոր ենք բաւարարութիւն տալու այդ մեր պահանջին: Սովածը իր համար այն կերակուրն է պատրաստում, որը նրան կշտացրել է: Գործունէութեան մէջ պահանջ զգացողը այն պարամունքն է սկսում, ինչից որ մի ուրիշ անգամ բաւարարութիւն է գտել:

Երբ մարդս գործելու այս կամ այն եղանակն է ընտրում, նշանաւոր դեր է խաղում նրա մէջ կազմած սովորութիւնը: Մենք մեծ բաւականութեամբ անձնատուր ենք լինում այն աշխատանքին, որին քիչ թէ շատ սովորել ենք, որովհետն այդ գործողութիւնը մեզանից պահանջում է պակաս լարում, քան թէ մի որևէ ուրիշ աշխատանք: Սովորութեան շնորհիւ մեր մէջ մշակուում է հակում մի որոշ տեսակ գործ անելու:


Մեր ամենօրեայ նիստ ու կացը կախած է զըլխաւորապէս մեր սովորութիւններից: Երեք քառորդը այն բանի, ինչ որ մարդ անում է, ասում և մինչև անգամ մտածում է, կախած է, Լէյքնիցի կարծիքով, սովորութիւններից: Մենք սովորում ենք այս կամ այն կերպ վարել մեր տան անդամների հետ և նոյնպէս ենք վարում նաև կողմնակի մարդկանց հետ: Ով սովոր է պարկեշտ, քաղաքավարի և վայելուչ վարել իր ընտանիքի անդամների հետ, նա նոյն վերաբերմունքը

փոխադրում է և կողմնակի մարդկանց վրա, և ընդհա-  
 կառակը:— Գիտակցելով որ այս կամ այն սովորութիւն-  
 ները անպատշաճ են, դեռ չենք ազատուում նրանցից: Յա-  
 ճախ մեր ինքնագիտակցութիւնը յարմարելով մեր մէջ  
 կազմուած սովորութիւններին արդարացնում է նրանց:  
 Ծիւիւուն կամ խմելուն սովոր մարդը միշտ մի  
 արդարացում կը դանի իր մէջ գոյացած սովորութեան  
 և դժար է նրան համոզել այդ սովորութեան փաստա-  
 կարութեան մէջ: Եթէ գիտակցութիւնը չի էլ արդա-  
 րացնում կազմած սովորութիւնները և մինչև անգամ  
 ցանկութիւն է առաջացնում ձեռք վերցնել սովորական  
 գործողութիւնից, այնուամենայնիւ վերջի ի վերջոյ սո-  
 վորութիւնը մի այնպիսի միտք կը թելադրի, որը շատ  
 թէ քիչ չափով հեշտացնելու է սովորական գործո-  
 ղութիւն կատարելը: Մի բանուր ամեն օր գործարան  
 աշխատանքի գնալիս մտնում էր պանդոկ խմելու և նա-  
 խաճաշելու, Համոզելով որ ձեռնտու չէ պանդոկ մըտ-  
 նել նախաճաշելու, մանաւանդ որ տանը, ընտանիքի  
 մէջ միշտ կարելի է նախաճաշել և լաւ և էժան, նա  
 վճուեց իր ոչ ձեռնտու սովորութիւնից ձեռք վերցնել:  
 Առաջին առաւօտը նա մտացաւ խոստումը և յիշեց  
 միայն, երբ խմել էր և սկսել էր նախաճաշել: Հետեւեալ  
 օրը նա վճուեց, աշխատութեան գնալիս, կրկնել ինքն  
 իրան՝ «չըմտնես պանդոկ»: Անցնելով պանդոկի առջևից  
 նա ըստ սովորութեան կանգնեց, բայց յետոյ կրկնելով  
 մտքում՝ «չը մտնես պանդոկ», առաջ շարժեց: Մի քա-  
 նի քայլ անելով, նա ինքնագո՞հ կերպով ասաց ինքն  
 իրան. «Այ լաւ է, Ֆրից, որ այսօր պանդոկ չըմտար,

դրա համար իբրև վարձատրութիւն ետ դարձիր ու  
 խմիր»... Մարդ, սովորութեան շնորհիւ, ասում է Բէ-  
 կօնը, անգիտակցօրէն անում է այն, ինչ որ անում էր  
 առաջ գիտակցօրէն, կարծէք նա մի աւտօմատ կամ  
 մեքինայ լինի՝ սովորութեան ձեռքով լարեած: Ոչ հա-  
 մոզումները, ոչ էլ մինչև իսկ ձևական խոստումներն  
 ու երդումները չեն ազատում նրան սովորութեան իշ-  
 խանութիւնից ճիրաններից:

Վնասակար սովորութեան հետ կուելը յաճախ  
 պատճառում է մարդուն անազնի հոգեկան տանջանք-  
 ներ: Նա անչափ անիծում է իր վնասակար սովորու-  
 թիւնը, մաշում է ինքն իրան նրա համար, որ այդ սո-  
 վորութեան ստրուկն է դարձել, բայց և այնպէս, եթէ  
 առիթը առաջ կը գայ, նա կը վարել կրկին իր սովորու-  
 թեան համաձայն: Հոգեկան տանջանքները, որ առա-  
 ջանում են սովորութիւն դարձած գործողութիւնը կա-  
 տարելուց յետոյ, քիչ են պակասեցնում սակայն այն  
 հաւանականութիւնը, թէ կարող է նոյն գործողութիւնը  
 կրկնել: Այդ պատճառով իրական կեանքում մարդիկ  
 աւելի շուտ մարդու սովորութիւնների վրա են յոյս դը-  
 նում, քան թէ նրա խօսքերի, որոնք սովորութեան մէջ  
 հաստատութիւն չեն գտնում: Մի բան կատար ածելու  
 միջոցին, ասում է Մաքիաւելը, քիչ են հաւատ ընծայում  
 մարդու խոստման, եթէ նա վաւերացւած չէ և այսպէս  
 ասած՝ սրբագործւած չէ սովորութեամբ:

Մինչև անգամ դարձութիւնների մէջ, որոնց դի-  
 մում են մարդիկ ազատ ժամերին, նկատուում է սովո-  
 րութեան ազդեցութիւնը: Սովորական պարպումներն



րից ազատ ժամանակ, որպէս զի ձանձրութիւնից ազատեն, մի քանիսը, համաձայն սովորութիւնների, ձեռքն են առնում երաժշտական գործիքը, միւսները թուղթ, մի ուրիշները զիւրք, մի քանիսը գնում են ըզբօանելու անտառը, դաշտը, Մինչև իսկ երեխան՝ եթէ ուզում է խաղալ, այն խաղն է խաղում, ինչին որ սովոր է:

Այս բոլոր ասածներից երևում է, թէ ինչ ահագին նշանակութիւն ունեն սովորութիւնները մարդու կեանքի և գործունէութեան մէջ: Նայած նրանց բնաւորութեանը, սովորութիւնները կամ բարձրացնում են մարդուն, նպաստում են նրա ֆիզիքական և հոգեկան բարեկեցութեան, կամ թէ ճնշում են նրան, և մեծ չարիք են պատճառում նրան: Սովորութիւնները դարձնում են մարդուն կամ բախտաւոր, կամ դժբախտ: Շէքսպիրը, որ խոր թափանցել է մարդկային բնութեան մէջ, միանգամայն ճիշտ է անւանել բարի սովորութիւնները «պահապան հրեշտակ», որ առաջնորդում է մարդու բարի ձանապարհով և պահպանում է նրան չարից, իսկ վատ սովորութիւնները «մի հրէշ» որ նրան քարշում է, հակառակ նրա կամքին, դէպի չարն և դէպի բարոյական անկումը:

#### IV

Սովորութիւնների օգուտն ու վնասը և նրանց նշանակութիւնը միւս կրթական դաստիարակչական միջոցների շարքում:

Բոլոր վերև ասածները պարզ ցոյց են տալիս, թէ

ինչպիսի ահագին նշանակութիւն ունեն սովորութիւնները մարդու համար: Այստեղից էլ ակնյայտնի է դառնում սանի մէջ սովորութիւնների կանոնաւոր կազմակերպման մասին հոգ տանելու անհրաժեշտութիւնը, այսինքն՝ նրա մէջ լաւ սովորութիւններ մշակելու և վատերի առաջն առնելու: Բայց այնուամենայնիւ մի քանիսը յենւելով Ժ. Ժ. Ռուսօի կարծիքի վրա, ենթադրում են, որ ոչ մի կարիք չըկայ սանի մէջ որևէ սովորութիւն արմատացնելու, որ ընդհակառակը՝ հարկաւոր է. որ նա ազատ լինի ամեն սովորութիւնից, և այն ժամանակ նրա մէջ մշակւած խոհեմութիւնը նրա ամենալաւ ղեկավարը կըլինի: «Միակ սովորութիւնը, որ պիտի զարգացնել երեխայի մէջ, դա որևէ սովորութեան բացակայութիւնն է», ասում էր Ռուսօն: «Միք խտտիլ նրան աւելի յաճախ մի ձեռքին, քան միւսին, միք սովորեցնիլ նրան միևնոյն ժամերին ուտել, քնել և շարժւել, մենակութիւն չըտանիլ ոչ ցերեկը, ոչ գիշերը: Հետզհետէ նրան ազատութեան պատրաստեցէք, պատրաստեցէք որ օգուտ քաղի բոլոր ուժերից, սովորեցնելով նրան տիրապետել իրան և ամեն դէպքում կատարել իր կամքը, հէնց որ այդ կամքը նրա մէջ երևան է գալիս» (էմիլ. զիրք առաջին):

Այսպիսի մի կարծիքի հետ դժւար է համաձայնւել. սովորութիւնը մարդուն իրական շօշափելի ծառայութիւն է մատուցանում շատ դէպքերում, ինչպէս այդ նկատել ենք: Առհասարակ սովորութիւնը անտեսում է այն ուժի քանակութիւնը, որ ծախսւում է գործունէութեան վրա. առաջին անգամ կատարւող աշ-

խատանքը, միևնոյն է ֆիզիքական լինի թէ մտաւոր, ուժի նկատելի սպառում է պահանջում. իսկ սովորական դառնալով՝ այդ աշխատանքը կատարում է հեշտ, աննկատելի կերպով, առանց յոգնեցնելու: Սովորութիւնը կրճատում է ժամանակը, որ հարկաւոր է գործունէութեան համար. առաջին անգամ գործողութիւնը կատարում է դանդաղ, իսկ սովորական դառնալով՝ կատարում է արագ: Սովորութիւնը դարձնում է բուն աշխատանքը աւելի ճիշտ և կանոնաւոր. առաջին փորձերը և քայլերը առհասարակ լինում են անհաստատ, անկանոն, տարտամ, իսկ ինչոր սովորական է դարձել, կատարում է լիովին պարզ կերպով, առանց տատանումների և շեղումների, մեքենայաբար:

Ի հարկէ, սովորութիւնը չափազանց խիստ զարգացած լինելով, ի փաստ մտքի և կամքի բարձր ընդունակութիւնների, մեքենայացնում է մարդուն, զրկում է նրան գիտակցութիւնից, դարձնելով խելացի էակից մի մեքենայ, բայց եթէ սովորութիւնը մշակւած է համապատասխան, խելացի կերպով, նա ոչ միայն չի արգելում, այլ և նպաստում է մարդու մէջ գիտակցութեան և խելացիութեան զարգանալուն: Մարդու գիտակցութեան շրջանը անսահման է: Նրան լայնացնելու համար, սեփական խելքով նորանոր հորիզոններ ընդգրկելու համար, անհրաժեշտ է հինը, յայտնին դարձնել կրկնւած-մեքենայական բնաւորութիւն ունեցող գործողութիւններ: Եթէ տառերն ու նրանց կապակցութեաններն տարբերելու համար հարկաւոր լինի շարունակ ուշք ու միտքը լարել, այն ժամանակ մեր

ուժերը բաւական չեն լինի կարգացածը հասկանալու և քննելու համար: Եթէ մտքի լարում է պահանջում հասկանալու համար՝ ինչքան կանի 6+8, կամ ի՞նչ է Պիթագորասի թէօրեման, այն ժամանակ հաշի և երկրաչափութեան բարձրագոյն շրջանները անմատչելի կը լինեն:

Տարրական գիտական հասկացողութիւնները կըրկընւած-մեքենայական, կարծէք ինքն իրան կատարող գործողութիւններ դարձնելով միայն մենք կարող ենք հասնել գիտութեան բարձր շրջաններին: Ընդունելի պիտի ստենք և բարոյական, գեղագիտական և ամեն ուրիշ տեսակ զարգացման մասին, տարրերի մեքենայացումը, այսինքն՝ մի ժամանակ խելացի և գիտակցական եղած հոգեկան երեւոյթները սովորականի փոխելը, ասել է՝ կրկնւած-մեքենայական գործողութիւններ դարձնելը, առանց գիտակցութեան կամ գիտակցութեան շատ փոքր մասնակցութեամբ կատարելը—հիմք է մտքի, բարոյականութեան և գեղասիրութեան բարձրագոյն արտայայտութեան:

Չարգանալ, իր ինքնակատարելագործութեան մէջ նոր և նոր քայլեր անել մարդ կարող է միայն այն ժամանակ, երբ ամբողջ հոգեկան գործունէութեան ցածր աստիճանները սովորութիւններ դարձնի, բայց այնպէս, որ վերջիններիս վրա, իբրև կրկնւած-մեքենայական գործողութիւնների վրա, հարկաւոր դէպքում հեշտութեամբ կարողանայ բնական ուշադրութիւնը դարձնել, կարողանայ սովորական գործողութիւնը նորից աչքի անցնել և վերաքննել, որի շնոր-

հիւ նրա առանձին օղակները կարող են կամ աւելի ամուր և սերտ կպչել իրար, եթէ համաձայն են բանականութեան, կամ նրանց կապը, աւելի կամ պակաս, կարող է թուլանալ և քանդուի, եթէ նրանք հակասում են տրամաբանական, բարոյական և այլ համոզմունքներին:

Եթէ սանի մէջ իր ժամանակին լաւ սովորութիւնների հիմքը չըզուրի, նրա մէջ անխուսափելիօրէն բուն կըզնեն վատ սովորութիւնները, որոնց համաձայն էլ նա կըսկսի վարել: Հէնց մտածողութիւնն ինքը, ինչպէս վերը յիշեցինք, առհասարակ յարմարում է կազմակերպւած վատ սովորութիւններին և արգարացնում է նրանց: Իսկ եթէ խիւղը մինչև իսկ չարգարացնէր էլ դոյացած վատ սովորութիւնը, այնուամենայնիւ դժուար կըլինէր մաքուր համար յաղթել այդ սովորութեանը և նա կըտանջւէր, որ նրա ցանկութիւնները չեն համաձայնում գործողութիւնների հետ, որոնք արդիւնք են նրա մէջ կազմւած սովորութիւնների:

Մարդը հասարակական էակ է, և ամեն մէկը պէտք է ապրի և գործի հասարակութեան մէջ: Պարզ է որ իւրաքանչիւր մարդ դեռ պատանի հասակում պիտի սովորի իրան որոշ կերպով պահել ուրիշ մարդկանց շրջանում, պիտի իւրացնի այնպիսի ձևեր, որոնք մի կողմից՝ չըստորացնէին նրան, իսկ միւս կողմից՝ չը վիրաւորէին ոչ միւս մարդոց, ոչ էլ բարոյական զգացմունքները: Մարդու ձևերը ծառայում են առհասարակ իբրև արտայայտութիւն կամ համեստութեան, բարոյական մաքրութեան, սրտի քնքշութեան ու բարու-

թեան, կամ կոպտութեան, ամպարտաւանութեան և բարսրտութեան: Ինչքան որ առաջին ձևերը համակրելի են, այնքան երկրորդները հակակրելի են ամենքի համար: Եթէ անհրաժեշտ է հոգ տանել սանի բարոյական և էստետիքական զգացմունքները կըթելու մասին, ապա անհրաժեշտ է նաև հոգ տանել որ այդ բարի զգացմունքները արտաբուստ արտայայտեն արարմունքների և ի միջի այլոց համապատասխան ձևերի միջոցով: Սանի ձևերը պիտի լինին պարզ, քաղաքավարի և ծառայեն իբրև արտայայտութիւն նրա ներքին բարի յատկութեանց: Այսպէս ասած կոտրատելն ու քրքրելը և թատերականութիւնը, նոյնպէս և կոպիտ ձևերը ոչ մի կերպ չը պիտի թոյլ տրեն սանի դաստիարակութեան ժամանակ:

Սովորութիւնները սկսում են կազմել մարդու մէջ մանկութիւնից: Հետևաբար մանկութեան տարիներից էլ պէտք է ուշադրութիւն դարձնել նրանց կանոնաւոր կազմակերպութեան վրա: Դաստիարակչական ներգործութեան նշանաւոր մասը նպատակ ունի երեխաների մէջ լաւ սովորութիւններ մշակել և վատերի առաջանալուն խանգարել: Երեխան դեռ չէ կարող հասկանալ, ինչո՞ւ այս ինչ բանը հարկաւոր է անել, իսկ այն ինչը հարկաւոր չէ, ինչո՞ւ պիտի այս կերպ վարուի և ոչ այլ կերպ. այն ինչ նա սովորում է այսպէս կամ այնպէս վարուել՝ մեծերի պահանջներին հետեւելով: Այսպիսով նրա մէջ արծարծող բարի սովորութիւնները քիչ-քիչ, նրա զարգանալով, լուսաբանում և ամրապնդում են գիտակցութեան և խելքի օգնու-

Թեամբ, և այդպիսով մշակուած է նրա մէջ բարոյական պահանջը, համոզմունքը:

Բարին, որին մարդ ընտելացել է փոքրութիւնից, մտաւոր հասունութեան զարգանալովը դառնում է նրա համար պահանջ:

«Եթէ կեանքի հէնց շեմքում, ասում է Յովհաննէս Ոսկեբերանը, սկսենք մանկան հոգին ուղղել դէպի բարին, այդ բարին կը դառնայ հոգու ներքին յատկութիւնը և կարծէք նրա երկրորդ բնութիւնը»:

Անհիմն կը լինէր ենթադրել, թէ դաստիարակութիւնը պիտի սահմանափակի լաւ սովորութիւններէ մշակելով և վատերի կազմելուն խանգարելով: Սովորութիւններ կազմելը միակը չէ, այլ միայն մէկն է կըթական միջոցներից և պիտի առաջ ընթանայ միւս այն կըթական ներգործութիւնների հետ զուգընթացաբար, որոնք նպատակ ունեն զարգացնելու միտքը, ազնւացնելու զգացմունքները, կըթելու կամքը, առաջնորդելու դէպի ինքնակատարելագործում:

Եթէ սանի դաստիարակութեան միջոցին սահմանափակենք նրա մէջ միայն հարկաւոր սովորութիւնները կըթելով և չը մշակենք, չը զարթեցնենք և չը զարգացնենք նրա մէջ մարդկային բնութեան վեհ կողմերը, ապա նրանից դուրս կը գայ մի չոր, նեղ ձևամոլ (Փորմալիստ)՝ բոլորովին զուրկ բարութիւն արտայայտելու և հոգեպէս ինքնակատարելագործելու ձգտումներէ: Բայց միւս կողմից, եթէ սանի դաստիարակութեան միջոցին սահմանափակենք նրա մէջ լաւագոյն մտքեր, զգացմունքներ և ձգտումներ զարթեցնե-

լով և նրա մէջ չը կըթենք միևնոյն ժամանակ նաև հարկաւոր սովորութիւնները, որոնք հնարաւորութիւն են տալիս իրագործելու բարձր նպատակներն և ձգտումները, նրանից դուրս կը գայ մի մարդ, որ օժտած է բարի ցանկութիւններով ու զգացմունքներով, բայց անընդունակ է արտայայտելու գործի մէջ այդ ցանկութիւնները ու զգացմունքները: Նա միշտ գիտակցելու է իր ցանկութիւնների և գործելու եղանակի միջև եղած անհամերաշխութիւնը, և այդ նրան հոգեկան տանջանք կը պատճառի. նա ամեն մի քայլափոխում կը գիտակցի իր անգորութիւնը, և այդ նրա մէջ կառաջացնի անբաւականութիւն՝ թէ ինքն իրանից, և թէ չըջապատող իրականութիւնից: Այդպիսով խնամք տանելով որ սանի մէջ ժամանակին լաւ սովորութիւններ կազմեն, անհրաժեշտ է դրա հետ միասին խնամքով կըրթել նրա մէջ և նրա հոգեկան բնութեան վեհ կողմերը, որպէս զի նա թէ բարութիւն արտայայտելու պահանջ զգայ և թէ ձգտի այդ իրագործելու կեանքի մէջ:

Թէպէտ սանի մէջ սովորութիւնների մշակութիւնը պիտի առաջ գնայ նրա մտքի զարգացման և զգացմունքի և կամքի դաստիարակութեան հետ զուգընթացաբար, սակայն մանկական հասակում, ինչպէս վերև արդէն ասեցինք, նրանց կըթուլութիւնը կազմում է դաստիարակութեան զլիսաւոր նպատակներից մէկը: Յետագայ տարիներում հետզհետէ լայնանում է սանի մտաւոր հորիզոնը և ազնւանում են նրա զգացումները և կամքը, բայց այդ ժամանակ թէ առաջուց գո-

յացած և թէ նոր գոյացող սովորութիւնները նրան անգնահատելի օգուտներ կը տան:

Սովորութիւնները ծառաների և օգնականների դերի մէջ պիտի մնան և մարդու չափահաս տարիներում, որպէս զի նա պահպանի իր հոգեկան ինքնութիւնը: Սովորութիւնները չը պիտի ձնշեն մարդու ինքնագործունէութիւնը, որ ուղղւած է դէպի ինքնակատարելագործութիւնը:

Մարդկային հոգին իր գերագոյն, վսեմ ձգտումների մէջ չը պիտի իրան սովորութիւններով կաշկանդւած զգայ: Անհրաժեշտ է ձեռք բերել կարևոր սովորութիւններ, բայց չը դառնալ նրանց ստրուկը: Ոչ թէ սովորութիւնները պիտի հասունացած մարդու գործունէութեանը ուղղութիւն տան, այլ նա պիտի ինքնուրոյն կերպով օգուտի նրանցից իր բարձր նպատակների համար: Չափազանց անախորժ է տեսնել մի հասակաւոր մարդու, որ ընկղմւել է իր սովորութիւնների մէջ, ինչպէս փափուկ, հանդարտ բազկաթուռի մէջ, և անձնատուր է եղել մտաւոր թմրութեան: Մտաւոր և բարոյական անշարժութիւնն է այդպիսի մարդու ճակատագիրը:

V

Սովորութիւնների առաջնաւը

Ի՞նչպէս են մարդու մէջ սովորութիւնները առաջանում: Ի՞նչպիսի պայմաններ են նպաստում և ո-

րոնք չեն նպաստում նրանց առաջնաւուն:

Սովորութիւններն առաջանում են երեք ճանապարհով,—մարդու վրա ունեցած արտաքին ազդեցութեամբ, ընդօրինակութեամբ և սեփական բանականութեան զօրութեամբ:

Առաջին ճանապարհով սովորութիւններն առաջանում են հէնց մանուկ հասակից. քանի դեռ երեխան իւր մտաւոր զարգացմամբ անկարող է հասկանալ, թէ ինչու մի տեսակ սովորութիւնները լաւ են, իսկ միւս տեսակները վատ, թէ ինչու պիտի վարենք այս կերպ և ոչ այլ կերպ, հիմք չունենք նրա խելքի և կամքի վրա յոյս դնել նրա մէջ հարկաւոր սովորութիւններն մշակելու համար. ծնողների կամ դաստիարակների պահանջը փոխարինում է նրա համար սեփական հասկացողութեան պակասը:

Մայրը, պարզ գիտակցելով, թէ ինչպիսի սովորութիւններ հարկաւոր է մշակել երեխայի մէջ և ինչպիսի սովորութիւններից պիտի հեռու պահել նրան, դրդում է նրան մի տեսակ գործողութիւնները կատարելու և խստօրէն ու ամենայն հոգատարութեամբ նախազգուշացնում է նրան միւս տեսակները կատարելուց: Այս ճանապարհով մայրը սովորեցնում է երեխային մաքրասէր լինել, հագնւել, վերցնել որոշ ձևով այս կամ այն առարկան, կատարել զանազան շարժումներ: Երբ որ երեխան քիչ մեծանում է, նա արդէն տէր է լինում լազմաթիւ սովորութիւնների:

Սխալ կըլինէր մտածել, թէ արտաքին ազդեցութեան ճանապարհով սովորութիւնները ստեղծւում են

միայն մանուկ հասակում. մեծերի մէջ էլ՝ պատահում է որ նոյն կերպ են գոյանում սովորութիւնները: Մեր միտքը պարզելու համար բերենք Փրանսիական ընթերցանութեան դասագրքերի մէջ յաճախ պատահող հետեւեալ հատեածը Բիւֆֆօնի խոստովանութիւններից:

«Այն համոզմունքի գալով, ասում է նա, որ հարկաւոր է սովորութիւն շինել վաղ վեր կենալը, ես պատուիրեցի ծառայիս ինձ ամեն առաւօտ ժամը վեցին զարթեցնել: Ծառան ճշտօրէն կատարում էր իւրան տւած հրամանը: Առաջին առաւօտ, երբ նա ինձ զարթեցրեց, ես բարկութիւնից սկսեցի նրան հայհոյել և հրամայեցի որ ինձ հանգիստ թողնի, ու նորից քնեցի: Վեր կենալուց յետոյ ես հրամայեցի ծառային որ նա այլ ևս ուշադրութիւն չըզարձնի յիշոցներիս, և զարթեցնելուց յետոյ քաշի վրայիցս վերմակը և ձեռք չըքաշի ինձանից, մինչև որ ես վեր չըկենամ անկողնիցս: Հետեւեալ առաւօտ ծառան կատարեց իմ հրամանը: Ուշք չըզարձնելով յիշոցներիս, սպառնալիքներիս, և մինչև իսկ խնդիրներիս, նա՝ ձիգ տալով վերմակը վրայիցս, ինձ հանգիստ չէր թողնում, մինչև որ ես տեղիցս վեր չը կացայ: Սկզբում ես անբաւական և գրգռած էի, բայց յետոյ շնորհակալութիւն արի ծառայիս նրա համար, որ նա ստիպեց ինձ վեր կենալ, և հրամայեցի այնուհետև էլ այդպէս վարել: Երբորդ օրը նմանապէս դժւար էր ինձ համար վեր կենալ, բայց և այնպէս ես վեր կացայ: Չորրորդ օրը ծառան աւելի քիչ ջանք պիտի գործ դնէր ինձ վեր կացնելու համար: Ծառան շարունակում էր այսպէս ինձ զար-

թեցնել, և ամեն անգամ հեշտանում էր իմ անկողնուց վեր կենալը: Մի քանի ժամանակ անցած, ես արդէն սկսեցի ինքս զարթնել և տեղիցս վեր կենալ: Իմ մէջ սովորութիւն դառաւ ժամը վեցին առաւօտները վեր կենալ, և այդ սովորութեանն եմ ես պարտական իմ հեղինակութիւնների մի քանի հատորները:

Սովորութիւնների կազմելու երկրորդ եղանակն է ընդօրինականութիւնը: Մենք շատ և ակամայից ենք ուրիշից օրինակ վերցնում, ուզենանք թէ չուզենանք, իսկ երեխաները շատ յաճախ իրենք են ուզում նմանել. մեծերը նրանց աչքում այնպիսի գեղեցիկ օրինակներ են, որ փոքրերը չեն կարող չը հետևել նրանց իրենց գործունէութեան մէջ: Այսպիսի ճանապարհով մանուկների մէջ բազմաթիւ սովորութիւններ են ծագում: Օրինակ՝ ինչպէս է կազմում սանի մէջ ծխելու սովորութիւնը: Սկզբում նա սկսում է ծխախոտը ծխել մեծերի օրինակին հետևելով: Նրան դուր է գալիս անել այն, ինչ որ մեծերն են անում: Ծխախոտի ծուխը նրա վրա անհաճոյ տպաւորութիւն է գործում, գլխացաւ է առաջացնում: Բայց չափահաս երեւալուց անկութիւնը և միւս ծխողներից ետ չըմնալու ձգտումը դրդում է նրան միւս անգամ էլ ծխել մի հատ, յետոյ երրորդ անգամ, չորրորդ անգամ և այլն: Ամեն անգամից յետոյ անհաճոյ զգացմունքը, որ անում է նրա վրա ծխախոտի ծուխը, աւելի թուլանում է և դրա հետ միասին նրա մէջ առաջանում է ծխելու սովորութիւնը: Նա այժմ արդէն ծխում է ոչ այնքան մեծերին նմանելու ցանկութիւնից դրդւած է, ինչքան

հնազանդւելով իր մէջ կազմւած սովորութեանը: Քանի նա բաւարարութիւն է տալիս այդ իր սովորութեանը այնքան սա զօրեղանում է և վերջի վերջոյ այնքան է սաստկանում, որ սովորութեանը գոհացում չը տալը արդէն անհաճոյ զգացմունք է առաջացնում: Ի հարկէ, երեխաները շատ սովորութիւններ են ձեռք բերում որչափ մեծերին, նոյնչափ և միւս երեխաներին հետեւելով, իսկ երբեմն աւելի վերջիներին, քան թէ առաջիներին:

Ընդօրինակութիւնը առանձապէս ուժեղ կերպով է յայտնւում մարդու հոգեկան ուժերի զարգացման ժամանակաշրջանում, այն է՝ ժանկական, պատանեկան և երիտասարդական հասակներում: Մանր նրանից է օրինակ վերցնում, ով իր վրա քիչ թէ շատ ուժեղ տպաւորութիւն է գործում և ինչ որ նա կարող է ընդօրինել: Մանին շրջապատող անձնաւորութիւնները իրենց գործողութիւններով իբրև օրինակ են ծառայում, որոնց նա նմանւում է: Նմանողական գործողութեան կրկնութիւնն է որ սովորութիւն է դառնում: Ուրիշներից օրինակ վերցնելով է երեխան սովորում այնպէս խօսել, ինչպէս որ շրջապատողներն են խօսում: Մինչև անգամ շրջապատողների խօսելու եղանակն էլ է իւրացնում: Հօր կամ մօր սովորական դարձաձքները կամ աւելորդ մասնիկներն իսկ երեխայի մէջ սովորական են դառնում: Մանր սովորում է ուրիշների հետ այնպէս վարւել, ինչպիսի վարւողութիւն որ նկատում է իր շրջապատող անձնաւորութիւնների մէջ: Եթէ նրան շրջապատող անձինք ամենքի հետ քաղաքավարի են, պատ-

րաստակամ են և սիրայօժար, սանն էլ դառնում է քաղաքավարի, պատրաստակամ և սիրայօժար: Եթէ ընդհակառակը՝ նրան շրջապատող անձինք կոպիտ են, յանդուգն, շարունակ գործ են ածում հայհոյական խօսքեր, սանն էլ նմանապէս դառնում է կոպիտ, յանդուգն և սովորում է հայհոյական խօսքեր գործածել: Ամենքին յայտնի է, թէ ինչպիսի ուժեղ ազդեցութիւն են անում մարդու վրա շրջանը և ընկերութիւնը և այս ազդեցութիւնը հիմնւում է ընդօրինակութեան և համապատասխան սովորութիւնների մշակման վրա:

Սովորութեան առջանալու երբորդ ձանապարհը — մարդու գիտակցական ջանքերն են: Կարևոր համարելով ստեղծել մշտական գործունէութեան մի յայտնի ձև, հպատակեցնել իր կեանքը որոշ կարգերին, մարդ գիտակցաբար ջանք է գործ դնում այդ նպատակին հասնելու համար: Նա անփոփոխ կրկնում է միևնոյն շարժումները, խուսափում է բոլոր շեղումներից, երբեմն ինքն իր հետ կոււում է, որպէս զի հաստատի գործողութիւնների մի որոշ սիստեմ և շարժումների հետեւողականութիւն: Սովորութիւնների այս վերջին շարքը մարդուց պահանջում է շատ ջանք, հաստատականութիւն ու եռանդ և մինչև իսկ կոխ իր դէմ: Առաջին երկու կարգին պատկանող, աւելի կրաւորական սովորութիւններից զանազանելու համար այն սովորութիւնները, որոնք առաջանում են սեփական բանակաւորութեան ներգործութեան շնորհիւ, կարելի էր հատուկութիւններ անւանել: Հատուկութիւնները, որպէս մարդու գիտակցական և բանական ջանքերի պտուղներ, աւելի

են օգտաւէտ մարդու համար, աւելի պակաս են մեքենայական, քան թէ սովորութիւնները, աւելի հեշտ են ենթարկուած քննադատութիւն և վերաքննութեան, աւելի շուտով կարող են թողնուիլ: Իրենց էութեամբ սակայն նրանք նոյնն են ինչ որ սովորութիւնները:

Ինչպէս է դաշնամուրի վրա նւագել սկսողը հրմտութիւն ձեռք բերում խաղի միջոցին մատներով հարկաւոր շարժումներ անելու: Նախ քան սովորելը սովորողից պահանջուած է լիակատար ուշադրութիւն և կամքի նշտնաւոր ուժ, որպէս զի մատներին հարկաւոր շարժումներ անել տայ: Բայց յետոյ քանի աւելի նա վարժուած է այդ շարժումների կատարելու մէջ, այնքան աւելի նրա համար հեշտանում է այդ և վերջապէս նրա մէջ մշակուած է նւագելու սովորութիւնը, մատները կատարում են խաղին հարկաւոր շարժումները, չըպահանջելով ոչ ուշադրութեան, ոչ էլ կամքի լարում:

Եթէ սանը կարողութիւն ունի արդէն հասկանալու այս կամ այն հմտութեան նշանակութիւնը, հարկաւոր է օգտուել նրա գիտակցութիւնից և զգացմունքից նրա մէջ հարկաւոր հմտութիւններ մշակելու համար: Հասկանալով այս կամ այն հմտութեան օգուտը՝ սանը ինքն կաշխատի այդ գործողութիւնը կրկնել, որ հասնի այդ հմտութեան կազմելուն:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ միայն գիտակցութիւնը չէ ապահովում սանի մէջ հարկաւոր հմտութեան մշակումը. նա հանդիսանում է միայն իբրև մէկը այն պայմաններից, որոնք նպաստում են այդ մշակմանը: Բացի այս պայմանից պիտի սանին շրջա-

պատել ուրիշ պայմաններով էլ, որոնք տանում են դէպի նոյն նպատակը:

Ինչ վերաբերում է այսպէս կոչւած՝ ուսումնարանական հմտութիւններին, պէտք է ասենք, որ նրանց կազմելուն յամենայն դէպս պիտի մասնակցէ սանի գիտակցութիւնը: Միայն մեքենայական ուսուցումը չպիտի լինի: Ուսուցիչը երեխաներին եթէ կարգալ-գրել է սովորեցնում, նա նրանց հետ միասին բառերը հընչիւնների է վերլուծում և այնուհետև սովորեցնում է նրանց այդ հնչիւններից բառեր կազմել: Եւ երեխաները գիտակցօրէն սովորում են ընթերցման միջոցով: Եթէ ուսուցիչը ուզում է աշակերտներին ծանօթացնել թւերի գումարի կամ արտադրեալի հետ, նա այդ թւերը գումարել ու բազմապատկել է տալիս, և նրանք պահանջած գործողութիւնը կատարելով գիտակցօրէն՝ իւրացնում են ստացւած գումարը կամ արտադրեալը: Եթէ ուսուցիչը սովորեցնում է այս կամ այն տառը գրել, նա նախ և առաջ բացատրում է՝ ինչ մասերից, տարրերից է բաղկացած այդ գիրը, ինչպէս են այդ տարրերը միանում գիր կազմելու համար և այլն:

Այն հմտութիւնները, որ մշակուած են սաների մէջ ուսուցանելու ժամանակ, լինում են պարզ և բարդ: Առաջինները կազմւած են մի կամ երկու շարժումներից, օրինակ՝ գրերի տարրերի գրելը. իսկ երկրորդները կազմւած են մի քանի պարզ շարժումների միացումից, օրինակ՝ բառերի գրելը: Բարդ շարժումներ անելու հմտութեանը աջողութեամբ հասնելու համար նպատակայարմար է այդ շարժումները բաժանել միջանի

մասերի և այս կերպ մաս-մաս հետզհետէ առաջ տանել սաներին, մինչև որ հարկաւոր հմտութիւնը իւրացնեն: Այսպէս օրինակ՝ սաների մէջ զեղեցիկ գրելու հմտութիւնը մշակելու համար, ուսուցիչը սկզբում նրանց վարժեցնում է գրերի կապակցման, այսինքն՝ բառերի գրութեան մէջ:

Սովորութիւն կազմելու բոլոր յիշած եղանակներին հետևում է այն, որ նրանց առաջացնելու համար անհրաժեշտ է երկու հիմնական պայման—բաւականին ուժեղ զբոսման՝ գործողութիւն կատարելու և նրա միատեսակ կրկնութիւնը: Արտաքին ներգործութեան շնորհիւ է կազմում սովորութիւնը, թէ ընդօրինակութեան կամ մարդու ներքին սեփական գորութեամբ, միշտ պիտի լինի մի զբոսում, մի զարկ, այն մղիչը, որ սկիզբն է դնում ամեն մի գործի: Այն սովորութիւններն մէջ, որ ստեղծւած են արտաքին զբոսման շնորհիւ, այդպիսի մղիչ է հանդիսանում գլխաւորապէս ազդող անձնաւորութեան համոզմունքը. նմանելուց առաջացած սովորութիւններն մէջ մղիչ է հանդիսանում գործողութեան վարակիչ լինելը և նմանելուց ստացած բաւականութիւնը. երբորդ կարգին պատկանող սովորութիւնների մէջ (հմտութիւնների մէջ)՝ սեփական համոզմունքը: Այդ պատճառով՝ կամենալով իւրացնել տալ սանին այս կամ այն գործողութիւնը, պիտի գըրաւենք նրան այդ գործողութիւնն անելու, ստեղծելով նրա մէջ բաւականին ուժեղ զբոսում դէպի այդ գործողութիւնը: Սկզբում դժւար է լինում կատարել պահանջւող գործողութիւնը. գործողութիւն կատարելու

զբոսումը կուում է հակառակ զբոսմաների հետ: Օրինակ՝ իրան մաքուր պահելու ձգտումը կարող է թուլանալ ծուլութիւնից, այն ջանքերի և աշխատանքների անհրաժեշտութիւնից, որ այդ դէպքում հարկաւոր են. բայց այնուհետև կրկնելով գործողութիւնը կատարւում է աւելի թեթև կերպով. կրթւողի մէջ սովորութիւն է դառնում այդ գործողութիւնը:

Միևնոյն գործողութեան անշեղ կրկնելը հասցնում է սովորութեան մշակութեան: Ահա ինչու է որ սանի մէջ այս կամ այն սովորութիւնը ստեղծելու համար մայրը կամ դաստիարակը իրանց պահանջմունքների մէջ պիտի հաստատամիտ լինեն: Եթէ մայրը ուզում է իր երեխային սովորեցնել, օրինակ՝ իրերը կարգին պահել, նա շարունակ պիտի պահանջի նըրանից այդ: Ի հարկէ, մինչև որ նրա մէջ հարկաւոր սովորութիւնը չը մշակւի, նա շարունակ կենթարկւի իր իրերը անկարգ թողնելու գայթակղութեան, կամ մի որևէ տեղ զնալու ցանկութիւնը, կամ ծուլութիւնը (որ ասում են՝ «ալարը գալիս է, ալարկոտութիւնը»), կամ յոգնածութիւնը, կամ այն յոյսը, թէ մէկը կարգի կը բերի իրերը, կամ մի որևէ ուրիշ հանգամանք նրա ներսում կառաջացնի մաքառում իրեր կարգի բերելու անհրաժեշտութեան դէմ: Բայց եթէ մայրը անզբաւելի կերպով խիստ պահանջէ նրանից իրերը կարգին մէջ պահել, պահանջը չը կատարելու գայթակղութիւնը հետզհետէ թուլանում է և վերջ ի վերջոյ նրա մէջ մշակւում է ցանկալի սովորութիւնը, որից ձեռք վերցնելն արդէն հէնց իր

համար անհաճոյ է լինում: Յանկանալով սանի մէջ մշակել անսխալ գրելու հմտութիւնը, անհրաժեշտ է պահանջել որ նա իր բոլոր աշխատանքները շատ խնամքով կատարի: Եթէ գրաւոր աշխատանքների մի մասը կանոնաւոր է կատարում, իսկ միւսները՝ ինչպէս կը պատահի, մեծ մասամբ ահագին սխալներով, նա ուղիղ, անսխալ գրել չի սովորի: Ահա թէ ինչու ոչ միայն լեզու ուսուցիչը, այլ և միւս աուարկաների ուսուցիչները, որոնք նմանապէս գրաւոր աշխատանքներ են տալիս, պարտաւոր են պահանջել, որ աշակերտները հարկաւոր ուշադրութեամբ վերաբերեն ոչ միայն գրաւոր աշխատանքների բովանդակութեանը, այլ և նրանց արտաքին կողմին և ի միջի այլոց նրանց անսխալ գրութեանը: Քանի որ գործողութեան միակերպ կրկնութիւնը դէպի հմտութեան մշակութիւնն է տանում, ապա ուրեմն անհրաժեշտ է, որ սաները վարժելիս լինեն այս կամ այն գործողութեանը միևնոյն ձևով: Աննպատակայարմար կը լինէր, եթէ ուսուցիչը աշակերտներին մի օր վարժեցնէր, օրինակ տառերի այսպէս գրելու, իսկ միւս օր նոյն տառերի այլ ձևով գրելու մէջ:

Վերը ասացինք որ մարդ իր ամբողջ կեանքի ընթացքում իր մէջ կազմում է այս կամ այն տեսակ սովորութիւններ և հմտութիւններ, իրականութեան պահանջի համեմատ: Բայց պատանեկական հասակում մարդ, երբ նրա կազմաւածքը առանձնապէս ընդունակ է և երբ նրա մէջ բուն չեն դրիլ բաւականին թուով սովորութիւններ և հմտութիւններ, նոր սովոր-

րութիւնները կազմում են արագ և աւելի հեշտ, քան հասակն առած կամ ծերութեան ժամանակ: Երեխայի մէջ սովորութիւններն առանձնապէս հեշտ և արագ կերպով են առաջանում:

Բաւական է, օրինակ, բնեցնելուց առաջ մանկան երկու երեք անգամ օրօրել, և օրօրելը նրա համար սովորութիւն կը դառնայ. նա ճշալով կը պահանջի, որ նրան օրօրեն քնից առաջ: Ճիշտ նոյնպէս, բաւական է մանկան մի քանի անգամ, կերակրելու միջոցին, ձախ ձեռքին խտտել, որպէս զի նա սովորէ այդ գրութեան և անհանգստութիւն սկսի արտայայտել, եթէ կերակրելու համար նրան աջ ձեռքի վրա պահէք: Երեխային ճաշից յետոյ քաղցրեղէնով են կերակրում, և նա արդէն սովորում է ճաշից յետոյ քաղցրացնել բերանը: Այն դաստիարակչուհիների ձեռքին, որոնք երեխաներին խնամելու ժամանակ մի օրոշ կարգ չեն պահպանում, վերջիններս յաճախ աղաղակում են, որովհետև շարունակ խախտում են նրանց մէջ արդէն կազմաւած սովորութիւնները:

Արդէն կազմաւած սովորութիւններին նման սովորութիւնները համեմատաբար աւելի հեշտ և շուտով են առաջանում, որովհետև նրանք իրանց համար բաւականին պատրաստ հող են գտնում առաջւայ սովորութիւնների մէջ: Այսպէս, երաժիշտը, որ դաշնամուրի վրա բաւականին երկար ժամանակ վարժութիւններ է կատարել, հեշտ և շուտով է սովորում այդ իսկ գործիքի վրա մի նոր երաժշտական կտոր նւագել:

Առաջ կազմաւած սովորութիւններին նման սովոր-

րութիւնների մշտկման հեշտութեամբ է բացատրուում այն հանգամանքը, թէ ինչու անհամեմատ հեշտ է դաստիարակել այն սանին, որի մէջ արդէն կան լաւ սովորութիւններ, քան թէ նրան, որ այդպիսի սովորութիւններ չունի կամ մինչև իսկ վատ սովորութիւնների տէր է: Առաջին դէպքում սանը միատեսակ սովորութիւնները շուտով է իւրացնում. երկրորդ դէպքում լաւ սովորութիւններ բուծելու համար դաստիարակը պէտք է նրանց համար տեղ մաքէր հակառակ սովորութիւնների դէմ մաքառելով:

VI

Վատ սովորութիւնների գոյանալու առաջն առնելը:

Հոգ տանելով, որ սանի մէջ լաւ սովորութիւններ կազմեն, անհրաժեշտ է զրա հետ միասին, նրա մէջ վատ սովորութիւնների ծագելու առաջն առնել: Աւելի լաւ է չարիքի առաջն առնել, քան թէ յետոյ նրան արմատախիլ անել:

Սանի մէջ սովորութիւններ կազմելու երեք ձևի համեմատ էլ վատ սովորութիւնների ծագման առաջն առնելու միջոցները զանազան պիտի լինեն: Այն վատ սովորութիւնների առաջն առնելը, որոնք ծագում են արտաքին ազդեցութիւնների շնորհիւ, ուղղակի կախւած է լինում այն անձնաւորութիւններից և միջավայրից, որի հետ շփումն է ունենում երեխան: Եթէ այս

անձնաւորութիւնները և միջավայրը բիրտ ու կոպիտ են, անապաշտ, անբարոյական, կեղտոտ և այլն, այն ժամանակ՝ անկասկած, նրանք բազմաթիւ վատ սովորութիւններ կը պատւաստեն երեխային: Այս բանի առաջանալուն խանգարել՝ կը նշանակի առողջացնել երեխային շրջապատող միջավայրը, թարմացնել, մաքրել միջավայրը, կամ՝ անհնարին եղած դէպքում, բոլորովին միջից դուրս բերել երեխային և բնակեցնել լաւ մարդկանց և իրերի շրջանում: Այս կարգին պատկանող վատ սովորութիւնների առաջն առնելու ուրիշ ճանապարհ չը կայ:

Յաճախ վատ սովորութիւնները առաջ են գալիս սանի մէջ՝ ուրիշների օրինակին հետեւելով: Օրինակը վարակիչ է, ինչպէս վերև ասացինք, մանաւանդ երեխաների համար: Պէտք է հեռացնել այն ամենը, ինչ որ կարող է վատ օրինակ ծառայել նրանց համար: Քանի որ միշտ չի կարելի լինում հեռու պահել երեխաներին վատ օրինակներից, գոնէ պէտք է ըստ կարելոյն դրանց ազդեցութիւնը չեզոքացնել, պախարակելով այդ օրինակները: Դպրոցում, օրինակ, կարող է լինել մի այնպիսի աշակերտ, որի սովորութիւնները չեն կարող լաւ օրինակ դառնալ միւս աշակերտների համար: Եթէ այս վերջիններս տեսնում են որ ուսուցիչներն ու դաստիարակները պախարակում են իրենց ընկերոջ վատ սովորութիւնները, որ նրանք ամեն միջոց ձեռք են առնում նրան վատ սովորութիւնները մոռացնել տալու համար, այն ժամանակ բնականօրէն չեն հետևի ընկերոջ վատ սովորութիւններին: Եւ էլ զրախից առաջ

սաների մէջ արմատ բռնած լաւ սովորութիւնները ընկերոջ վատ օրինակի ազդեցութեանը արգելք կը հանդիսանան: Այս բանին արգելք կը հանդիսանայ նաև վատ սովորութիւնների վնասակար կամ անպատշաճ լինելու գիտակցութիւնը, որ սաների մէջ զարթնում է բոլոր կրթիչ գործօնների ազդեցութիւններէ:

Վերջապէս, պախարակելի սովորութիւններ երեսխան կարող է իւրացնել և ինքն իրան, սեփական ջանքերով: Օրինակ, նա կարող է աշխատել ընտելանալ հաստատակամ և քաջասիրտ լինելու, և այդ պատճառով կըսկսի կոպիտ վարել իր ըոյրերի և եղբայրների հետ, անպատկառ՝ ծնողների հետ և այլն: Հասկանալի է որ ոչ մի ուրիշ միջոց չը կայ այդ տեսակ սովորութեան առաջն առնելու, քան հոգ տանել երեսխայի ընդհանուր զարգացման մասին, ուղղութիւն տալ նրա հայեացքներին և նպաստել նրա համոզմունքների աւելի խելացի ձևակերպութեանը:

Գանի որ սովորութիւններն ու հմտութիւնները մանաւանդ արագ և հեշտ են առաջանում սանի մատաղ տարիներում, ուստի և հէնց այդ տարիներում պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել վատ սովորութիւնների և հմտութիւնների առաջն առնելու վրա:

## VII

Վատ սովորութիւնների արմատախիլ անելը:

Սանի մէջ գոյացած վատ սովորութիւնը պէտք է

արմատախիլ անել: Ոչ բոլոր սովորութիւններն են հեշտութեամբ վերացում: Ինչքան աւելի խոր է նստել սովորութիւնը մարդու մէջ, այնքան աւելի դժւար է ոչնչացում, և ընդհակառակը՝ բանի աւելի թոյլ է լինում, այնքան աւելի շուտով արմատախիլ լինում: Հին սովորութիւնները անագին դժւարութիւնով են վերացում: Սանի մանուկ հասակում, երբ վատ սովորութիւնները դեռ չեն կարողացել խոր արմատներ ձգել նրա մէջ, նրանք աւելի հեշտ են տեղի տալիս համապատասխան ներգործութեանը, քան թէ աւելի հասունացած տարիքում, երբ արդէն նրանք ամրապընդւել են: Այս բանից երևում է որ երբէք չը պէտք է ետաձգել վատ սովորութիւնների արմատախիլ անելը մինչև աւելի ուշ տարիքը. հէնց որ նկատուել է վատ սովորութիւնը, պիտի իսկոյն միջոցներ ձեռք առնել նրան ոչնչացնելու համար: Ենթադրել իբր թէ ապագայում, երբ սանի բանականութիւնը աւելի կը զարգանայ, նա ինքը կը թօթափի իր վրայից վատ սովորութիւնը, շատ անհիմն է: Թէկուզ նա և հասկանայ իր վատ սովորութեան վնասակարութիւնը, սակայն հազիւ թէ նա կարողանայ հեշտութեամբ յաղթել նրան, քանի որ այդ սովորութիւնը սաստիկ ամրապնդւած կը լինի նրա մէջ:

Վատ սովորութեան արմատախիլ անելու աւելի կամ պակաս դժւարութիւնը կախած է նաև այդ սովորութեան էութիւնից և թէ ինչ կապ ունի նա ուրիշ սովորութիւնների հետ: Յայտնի է որ սովորութիւններից մի քանիսը աւելի հեշտ են արմատախիլ

լինում, միևնույնը աւելի դժւար, նայելով թէ ինչ տեսակ սովորութիւններ են և թէ ինչ կապ ունեն ուրիշ սովորութիւնների հետ:

Արդէն կազմակերպւած վատ սովորութիւններից խոյս տալու համար պէտք է չը կրկնել այն գործողութիւնը, որ սովորութիւն է դարձել: Եթէ գործողութեան կրկնութիւնը նպաստում է սովորութեան ամրանալուն, ոչ-կրկնութիւնն էլ թուլացնում նրան: Այստեղից պարզ երևում է որ սանի մէջ վատ սովորութիւնը արմատախիլ անելու համար պէտք է թոյլ չը տալ կրկնել սովորական վատ գործողութիւնը և այդ նպատակով հեռացնել նրա մօտից այն ամենը, ինչ որ կարող է առիթ տալ սովորական գործողութեան կատարածութեան: Երբեմն անհրաժեշտ է լինում այդ նպատակով բոլորովին փոխել երեխայի կեանքի պայմանները և այդպիսով դիւրացնել նրա մաքրումը վատ սովորութեան հետ:

Մեծ նշանակութիւն ունի այս դէպքում սանի ցանկութիւնը վատ սովորութիւնից ազատելու: Ահա թէ ինչու դաստիարակը պիտի ամեն կերպ աշխատի նրա մէջ արթնացնել վատ սովորութեան վնասակարութեան գիտակցութիւնը և նրանից ազատելու ցանկութիւնը: Սանի գիտակցութիւնն ու ցանկութիւնը ամենալաւ աջակիցները կը լինեն վատ սովորութիւնը արմատախիլ անելու գործում. նա ինքը կը սկսի խոյս տալ վատ սովորական գործունէութիւնից, իսկ եթէ սանի մէջ մի այդպիսի ցանկութիւն ծագել է, վատ սովորութեան վերացումը աւելի կը դժւարանայ:

Դաստիարակը հնարաւորութիւն չունի հետեւելու սանի ամեն քայլափոխին, և վերջինս՝ օգտւելով այդ բանից, կը սկսի բաւարարութիւն տալ իր վատ սովորութեանը, հէնց որ դաստիարակն աչքից հեռու կը լինի: Յամենայն դէպս, եթէ աշակերտի մէջ չէ ծագել վատ սովորութեան վնասակար լինելու գիտակցութիւնը, պատիժները ոչինչ չեն անի, որովհետև նրանք միմիայն առաջ են բերում: Վանագան՝ մանկավարժական տեսակէտից վնասակար հետեւանքներ:

Վատ սովորութիւնը արմատախիլ անելու հետ միտամանակ շատ օգտաւէտ է սանի մէջ մշակել նրան հակադիր, լաւ սովորութիւնը կամ առհասարակ մի այնպիսի սովորութիւն, որ չէզոքացնէ վատը: Այսպէս, երբ ուզում ենք մոռացնել տալ սանի սխալ գրելը, պէտք է միաժամանակ սովորեցնենք ուղիղ գրելը: Անմաքրասիրութիւնն ու անկարգապահութիւնը արմատախիլ անելիս պէտք է միաժամանակ նպաստենք նրա մէջ մաքրասէր և կարգապահ լինելու սովորութեան առաջանալուն:

### VIII.

#### Գլխաւոր սովորութիւնները

Ի լրումն մեր ասածների՝ մենք կամենում ենք համառօտակի մատնացոյց անել երեք գլխաւոր սովորութիւնների վրա, որոնց կը թու թեան մասին մայրե-

ըը պէտք է որչափ կարելի է վաղ հոգ տանեն... Այդ սովորութիւններն են—մաքրասիրութիւնը, ճշմարտասիրութիւնը և աշխատասիրութիւնը:

Մաքրասիրութիւնը մարմնական առաքինութիւններինց ամենազլխաւորն է: Մենք չենք կարող մարդուց պահանջել ոչ Ֆիզիքական գեղեցկութիւն, ոչ առանձին ֆիզիքական ուժ, ոչ էլ գերազանց առողջութիւն, եթէ բոլոր այս յատկութիւնները չեն տրւած բնութիւնինց: Կրթութիւնը, արւեստը չեն կարող սըտեղծել այս ամենը, թէև կարող են որ և է բան անել այդ կողմից, իսկ մաքրասիրութիւնը կարելի է առաջացնել: Մաքրասիրութիւնը շատ կարևոր բան է. նա աչքի առաջ ունի նախ մարմնի, ապա շորի և ամբողջ շրջապատի մաքրութիւնը: Անմաքրասէր մարդը ամենամեծ մեղքն է անում իր մարմնի, իր առողջապահութեան նկատմամբ: Համապատասխան սովորութիւնը կրթելու համար մայրը հէնց մանկան ծնւելու առաջին օրից պիտի նրան մաքուր պահի, թոյլ չը տայ ցեխի ու կեղտի մէջ մնալ և նոյնպիսի հոգատարութեամբ պիտի վերաբերւի և առհասարակ նրան շրջապատող բոլոր իրերի մաքրութեանը: Երեխայի աչքը սովորում է մաքրութեանը, նա աննկատելի կերպով վարժւում է մաքրասէր լինելու և ամեն մի շեղում այն պատւիրանից թէ «մաքուր պահի քեզ»՝ նրա մէջ զգւանք կառաջացնի: Երբ երեխան կը մեծանայ և կընկնի մի այդպիսի մաքուր միջավայրը, նրա մանկական սովորութիւնը կամրապնդւի նմանողութեան շնորհիւ, իսկ աւելի ուշ հասակում նա արգէն գիտակցօրէն կը պահ-

պանի մաքրասիրութեան իր վաղեմի սովորութիւնը:

Այն, ինչ որ մարմնի համար է մաքրասիրութիւնն է, նոյնն է հոգու համար ճշմարտասիրութիւնը: Ստախօս, անճշմարտասէր՝ մարդը՝ զուրկ կը լինի ամենաէական պայմանից ուրիշ բարոյական յատկութիւնները ձեռք բերելու համար: Իտալացի գրող Պետրոս Զօրգանին շատ իրաւացի պնդում է որ արատները ամեն դէպքում ոչ այլ ինչ են, եթէ ոչ ստութիւն. «Գոռոզամիտը իր մէջ ստութիւն պիտի գտնի, որովհետև նա իրեն իսկական իր արժանիքից բարձր է գնահատում: Ծճմարտութիւնից հետո է նաև խոնարհամիտ, ստորաքարշ մէկը, որովհետև նա իրեն իր իսկական արժանաւորութիւնից ստոր է դասում: Պիտի իր մէջ ստութիւն նըկատի և անմիտ յանդուգնը, որովհետև նա կամ չըգիտի վտանգը, կամ սխալում է համարելով իր ուժերը բաւական այդ վտանգին յաղթելու համար: Կեղծ է և երկչոտի դրութիւնը, որովհետև նա վտանգ է տեսնում և այնտեղ, որտեղ այդ չը կայ, կամ չի հասկանում, որ իր ուժերը այս դէպքում կը բաւեն: Եթէ հետեւելու լինենք կեանքին, կերևայ որ առաքինութիւնը ճշմարիտ հասկացողութիւն է իր և չուրիշներին մասին, իսկ արատը աւելի կամ պակաս շեղում է ճշմարտութիւնից:

Ծճմարտասիրութեան զարգացման միջոցները նոյնն են, ինչ որ և մաքրասիրութեան զարգացմանը, այն է՝ մօր և հօր ճշմարտասէր լինելը, երեխաներին ճշմարտասիրութիւնը խրախուսելը նրանց կողմից, ճշմարտասէր երեխաների և հասակաւորների օրինակին հետեւելը և վերջապէս, աւելի չափահաս տարիքում, գիտակցութիւ-

նը, որ ճշմարտութիւնը անհրաժեշտ է և ահագին նը-  
շանակութիւն ունի բոլոր կենսական յարաբերութիւն-  
ների մէջ: Ծշմարտասիրութեանը և նոյնպէս մաքրա-  
սիրութեանը ահագին նշանակութիւն է տրւում մանա-  
ւանդ անպլիական դաստիարակութեան մէջ: Անպլիա-  
կան դպրոցներում երեխաները սուտ չեն խօսում, սը-  
տախօսութիւնը այնտեղ ամենամեծ արատն է և ստա-  
խօսներին վնասում են:

Երրորդ ամենակարևոր սովորութիւնն է աշխա-  
տասիրութիւնը: Ոչ մի աւելի զգւելի տեսարան չը  
կայ քան թէ այն երեխան, որը անգործութիւնից  
ձանձրանում է, չը գիտէ թէ ինչի վրա գործ դնի իր  
ուժերը, ձանձրութիւնից տխմարանում է կամ անտա-  
նելի է դառնում բոլորի համար: Բնութիւնից երեխա-  
ները շատ գործունեայ են, և շատ ջանք չը պիտի թա-  
փել այդ սրբազան հուրը նրանց մէջ վառ պահելու  
համար: Դպրոցները այդ կողմից շատ մեծ ֆլասս են  
պատճառում երեխաներին, իրենց անհասկանալի և  
վաղաժամ ուսուցումով երեխաներին անգործունէու-  
թեանը դատապարտելով: Մեր դասարաններում երե-  
խաները սոսկալի ձանձրանում են: Այդ տեսակ երե-  
խաներից դուրս են գալիս ծոյլ, դանդաղաշարժ մար-  
դիկ, որոնք ոչ իրենց ուժեղը լարել են կարողանում,  
ոչ էլ երկար աշխատել: Մենք պէտք է աշխատենք ե-  
րեխաներին նիւթ տալ գործունէութեան համար, բա-  
ւականին շատ և բաւականին բազմազան. նրանք չը  
պիտի տախտկութիւն գզան, պարապ մնան, չը պիտի  
ձանձրոյթ և պարապութիւն տեսնեն և իրանց շուրջը:

Նրանք պիտի մեծանան կենդանի գործունեայ էակներ,  
որոնք հանգիստ են առնում միայն այն ժամանակ,  
երբ քնում են: Նրանց ամբողջ արթուն կեանքը պիտի  
լինի բազմազան գործունէութեան անվերջ փոփոխու-  
թիւն, ֆիզիքական և հոգեկան գործունէութեան,  
դարձութիւնների և խաղերի, զբաղմունքների և աշ-  
խատանքների, նայելով հասակին, մանկական ուժերին,  
ճաշակին և պահանջներին: Գործունեայ երեխաները  
կը դառնան ապագայում եռանդուն, ձեռները չը ծա-  
լող, անյողողող և ձեռներէջ գործիչներ և մարտիկ-  
ներ՝ բառերիս բարձրագոյն մտքով:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

- I. Ի՞նչ է սովորութիւնը: — Սովորութիւն դարձրած գործողութիւնների տարբերութիւնը, բնագոյն գործողութիւններից: 1—5
- II. Սովորութիւնների նշանակութիւնը մեր մարմնաւոր կեանքում: 6—9
- III. Սովորութիւնների նշանակութիւնը մեր հոգեկան կեանքում: 10—18
- IV. Սովորութիւնների օգուտն ու վնասը և նրանց նշանակութիւնը միւս կրթական դաստիարակչական միջոցների շարքում: 18—26
- V. Սովորութիւնների առաջանալը: 26—38
- VI. Վատ սովորութիւնների գոյանալու առաջն առնելը: 38—40
- VII. Վատ սովորութիւնների արմատախիլ անելը: 40—43
- VIII. Գլխաւոր սովորութիւնները: 43—47

«Ազգային գրադարան»



NL0150302

